ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/3

ք. Երևան «_20_» «__05__» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության պետ Ա.Մխոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Սևոյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են տաս օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխա նող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 66251800 (վաթսունվեց միլիոն երկու հարյուր հիսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ է 30000000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամը, որից 20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամը հանդերձանքի մասով, իսկ 10000000 (տաս միլիոն) ՀՀ դրամը անկողնային պարագաների մասով, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

5.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

5.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.5 Եթե Գնորդը Պայմանագրի 5.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 5.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը և պայմանագրի հավելվածները կազմված են 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Արշակունյաց-63	ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 02560711
Ծառայության պետ՝	Գլխավոր տնօրեն
Ա.Մխոյան	Մ.Սևոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N1
«20» «__05__» 2019թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1.	18211100/1	կիսավերարկու (դատապարտյալի)		Կիսավերարկու (բաճկոն ձմեռային /դատապարտյալի/): Բաճկոնը պետք է կարված լինի սև գույնի բամբակյա կտորից, 240-250 գ/մ2 մակերեսային խտությամբ 1-ին կարգի կտորից: Երկարությունը գոտկատեղից առնվազն 25 սմ ներքև: Բաճկոնը պետք է ունենա 3 վրադիր գրպան՝ կափույրով, որից երկուսը կողային հատվածում, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում: Կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «Անուն Ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, հետևամասը՝ վերին կտրվածքով: Ներդիրը 4 սմ հաստությամբ սինթեպոնով և մետաքսյա աստառով, որոնք միմյանց հետ մգդակված են շեղանկյուն / փախլավաձև / հյուսքով, (իսկ թևքերի հատվածում 3սմ հաստությամբ սինթեպոն 120գ/մ2), որոնք մգդակված են 100 % Պ/Է աստառի հետ շեղանկյուն /փախլավաձև/ հյուսքով: Աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի 60-80գ/մ2, ձախ կողմում ունի ծոցագրպան: Բաճկոնը կոճկվում է 5 հատ կոճակով: Յուրաքանչյուր բաճկոն պետք է ունենա ներսի կողմում կարված պիտակ՝ ՔԿԾ գրառմամբ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝	հատ	6990	2796000	400	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	400	2019թ. 4-րդ եռ.

				պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:							
2.	18221600/6	կոստյումներ (դատապարտյալի)		Կոստյում դատապարտյալի: Կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: Հագուստը պետք է կարված լինի սև գույնի բամբակյա, 240-250 գ/մ2 մակերեսային խտությամբ կտորից: Բաճկոնը պետք է ունենա 3 վրադիր գրպան, որից երկուսը կողային հատվածում, մուտքը թեք, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում ուղիղ, կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «Անուն Ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, օղակ կոճակով կոճկվող թեզանիքով, հետևամասը՝ վերին կտրվածքով: Բաճկոնը կոճկվում է կոճակներով: Բաճկոնի գոտկատեղը մշակվում է գոտիով, որի վրա կարվում է չափը կարգավորող ախլակ, 1 օղակ 2 կոճակով: Տաբատի ուրվագիծը՝ ուղիղ, կողքային վրադիր գրպաններով, մուտքը թեք: Գոտկատեղում մշակված է գոտին՝ կամրջակներով, կոճկվում է մեկ օղակ կոճակով, գուլֆիկը 3 օղակ կոճակով: Գոտու վրա տեղադրված է չափսի կարգավորման 2 ախլակ 1 օղակ 2 կոճակով: Կեպին բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Ետևի հատվածում չափսի կարգավորման հնարավորությամբ: Յուրաքանչյուր հագուստի կոմպլեկտ պետք է ունենա բաճկոնի ներսի կողմում կարված պիտակ ՔԿԾ գրառմամբ: Հագուստի մեջքամասի վերին եզրի կարի տակից կարվում է չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:	հատ	8170	21078600	2580	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատար ողական հիմնարկներ	2580	2019թ. 3-րդ եռ.
3.	18331200/1	վերնաշապիկներ (երկարաթև դատապարտյալի)		Վերնաշապիկը երկարաթև է, կարված 140-160 գ/մ2 մակերեսային խտությամբ կիսաբամբակյա սև գործվածքից: Բաղկացած է լանջափեշերից, մեջքից և թևերից: Լանջափեշերը կենտրոնական ութ կոճակով, օղակով կոճկվող և վրադիր	հատ	3190	8613000	2700	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատար ողական հիմնարկներ	2700	2019թ. 3-րդ եռ.

				գրպանով: Օձիքը ծալովի, թևերը ներկարված բազկակալներով և կոճկվող բացվածքներով: Փեշի եզրին փակցվում է չափս-հասակի պիտակ: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:							
4.	18311190/1	խալաթ (կանացի, դատապարտյալի)		Կարված բամբակյա գունավոր վանդակավոր կամ պուտավոր գործվածքից, 1մ2 մակերեսային խտությունը 140 գրամից ոչ պակաս, մեկ բորտանի, կոճկովի, երկարաթև, որը ծալելով և կոճակով հնարավոր լինի դարձնել կարճաթև: Օձիքը փռված, գոտիով կապովի: Խալաթի ներսի ձախակողմյան փեշին, գոտկատեղի մասում պետք է ունենա պիտակ, որի վրա նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:	հատ	4200	336000	80	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	80	2019թ. 3-րդ եռ.
5.	18311190/2	խալաթ (խոհարարի)		Խալաթ սպիտակ: Արտադրվում է բամբակյա սպիտակ գույնի կտորից: 1մ^2 մակերեսային խտությունը 140-160 գրամ: ՈՒղիղ ձևվածքով կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշից, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է 5 հատ ջերմակայուն պլաստմասայից կոճակներով: Կոճակների միջև հեռավորությունը 11 սմ: Առաջամասում մշակված են վրադիր գրպաններ, որից երկուսը կողքի և մեկը ձախ կրծքամասում: Թևքերը ներկարված, երկար երկկարանի և մեկ կոճակ օղակով կոճկվող մանժետով: Օձիքը ծալովի: Խալաթի ներսի ձախակողմյան փեշին, գոտկատեղի մասում պետք է ունենա պիտակ, որի վրա նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ:	հատ	3800	114000	30	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	30	2019թ. 3-րդ եռ.

				Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:							
6.	18231100/1	զգեստներ (կանացի, դատապարտյալի)		Զգեստ կնոջ՝ կարված խիտ բամբակյա ծաղկավոր գործվածքից, որի 1մ² մակերեսային խտությունը 210 գրամից ոչ պակաս, մեկ բորտանի, կոճկովի, երկարաթև և թևքածալով (մանժետով), օձիքը փռված, գոտիով կապովի: Զգեստը ներսի ձախակողմյան փեշին, գոտկատեղի մասում պետք է ունենա պիտակ, որի վրա նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:	հատ	8380	670400	80	ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ	80	2019թ. 3-րդ եռ.
7.	18341100/1	շապիկ (տղամարդու, դատապարտյալի)		Շապիկներ բամբակյա սև տրիկոտաժե գործվածքից, տղամարդու: Շապիկի փեշերը ծալված, զարդակարված, մեջքամասի վերին եզրին փակցվում է չափս-հասակի պիտակ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը:	հատ	550	2750000	5000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	5000	2019թ. 3-րդ եռ.
8.	18311220/1	գիշերանոցներ (կանացի, դատապարտյալի)		Գիշերային շապիկներ բամբակյա գործվածքից, կանացի: Շապիկի փեշերը ծալված, զարդակարված, մեջքամասի վերին եզրին փակցվում է չափս-հասակի պիտակ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը:	հատ	990	316800	320	ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ	320	2019թ. 3-րդ եռ.

9.	18311110/1	վարտիք (տղամարդու, դատապարտյալի)		Վարտիք տղամարդու, բամբակյա տրիկոտաժե սև գործվածքից, տարբեր չափերի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը:	հատ	477	2385000	5000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	5000	2019թ. 3-րդ եռ.
10.	18311110/2	վարտիք (կանացի, դատապարտյալի)		Վարտիք կանացի, բամբակյա տրիկոտաժե գործվածքից, տարբեր չափերի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը արտադրման ամիսը և տարեթիվը:	հատ	400	192000	480	ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ	480	2019թ. 3-րդ եռ.
11.	39141200/1	ներքնակներ		Ներքնակի պատրաստի արտադրանքի չափսերը. լայնությունը՝ 75 սմ, երկարությունը՝ 195 սմ, քաշը՝ 8,0 կգ, երեսացուն՝ բամբակյա գործվածք (դիագանալ), 1 մ^2 քաշը ոչ պակաս 220 գր.: Ներքնակը պետք է լցոնված լինի դրա համար նախատեսված էկոլոգիապես մաքուր բնական կամ արհեստական հումքով: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ներքնակի անկյուններց մեկում պետք է կարված լինի պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:	հատ	5800	5800000	1000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	1000	2019թ. 3-րդ եռ. 500 հատ, 4-րդ եռ. 500 հատ
12.	39511190/1	բարձ, բամբակյա		Բարձի պատրաստի արտադրանքի չափսերը. լայնությունը՝ 50 սմ, երկարությունը՝ 60 սմ, քաշը՝ 1,8 կգ, երեսացուն՝ բամբակյա գործվածք (դիագանալ), 1 մ^2 քաշը ոչ պակաս 220 գր.: Բարձը պետք է լցոնված լինի դրա համար նախատեսված էկոլոգիապես մաքուր բնական կամ արհեստական հումքով: Բարձի անկյուններց մեկում պետք է կարված լինի պիտակ, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:	հատ	1600	1600000	1000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	1000	2019թ. 3-րդ եռ. 500 հատ, 4-րդ եռ. 500 հատ
13.	39511130/1	սավաններ		Բամբակյա սավան, գործվածքը բամբակյա սպիտակ կտորից, պատրաստի արտադրանքի չափսերը (215 x 120) սմ: 1մ^2 մակերեսային խտությունը 120-140 գր: Ճերմակության աստիճանը, ոչ պակաս քան 82%: Գործվածքի	հատ	1400	11200000	8000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներ	8000	2019թ. 3-րդ եռ. 4000 հատ, 4-րդ եռ. 4000 հատ

				գծային չափերի փոփոխությունը թաց մշակումից հետո չպետք է գերազանցի մինուս 5 %: Պատրաստի արտադրանքի դետալների ձևվածքն պետք է իրականացվի հենքային թելերի ուղղությամբ: Արտադրանքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Պատվիրատուի պահանջով պատրաստի արտադրանքի ներքևի ձախակողմյան հատվածում չմաքրվող ներկով պետք է դաջվի արտադրման ամիսը, տարեթիվը և ՔԿԾ գրառումը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 50-100 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 10 հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը:							
14.	39511170/1	բարձերեսներ		Բամբակյա բարձի երես, գործվածքը 100% բամբակյա սպիտակ կտորից, պատրաստի արտադրանքի չափսերը (60 x 50) սմ: 1մ2 մակերեսային խտությունը 120-140 գր: Ճերմակության աստիճանը, ոչ պակաս քան 82%: Գործվածքի գծային չափերի փոփոխությունը թաց մշակումից հետո չպետք է գերազանցի մինուս 5%: Պատրաստի արտադրանքի դետալների ձևվածքն պետք է իրականացվի հենքային թելերի ուղղությամբ: Արտադրանքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Պատվիրատուի պահանջով պատրաստի արտադրանքի ներքևի ձախակողմյան հատվածում չմաքրվող ներկով պետք է դաջվի արտադրման ամիսը, տարեթիվը և ՔԿԾ գրառումը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 100-200 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 20 հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը:	հատ	600	3600000	6000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատար ողական հիմնարկներ	6000	2019թ. 3-րդ եռ. 3000 հատ, 4-րդ եռ. 3000 հատ
15.	39514100/1	սրբիչներ, բամբակյա		Սրբիչ արտադրատեսակը բամբակյա մանվածքից, վաֆլենման 45 սմ-ից ոչ պակաս լայնությամբ, 100 սմ երկարությամբ: Քաշը 1մ^2 մակերեսային խտությունը՝ 200-220 գր: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Պատվիրատուի պահանջով պատրաստի արտադրանքի ներքևի ձախակողմյան հատվածում չմաքրվող ներկով	հատ	600	4800000	8000	ՀՀ ԱՆ բոլոր քրեակատար ողական հիմնարկներ	8000	2019թ. 3-րդ եռ. 4000 հատ, 4-րդ եռ. 4000 հատ

				պետք է դաջվի արտադրման ամիսը, տարեթիվը և ՔԿԾ գրառումը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 50-100 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 20 հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, ամիսը և տարեթիվը:							
		ԸՆԴԱՄԵՆԸ					66251800				

Ծանոթություն՝

*Բոլոր ապրանքները մատակարարվելու են ՀՀ տարածքում տեղակայված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներ, ապրանքների մատակարարումը և բեռնաթափումը իրականացվելու է աշխատանքային օրերին ժամը 09.30-ից մինչև 17.00-ն մատակարների միջոցներով և նրանց հաշվին, յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամկետները նախապես սահմանվում է Գնորդի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի:

*Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշները, նմուշառումից հետո միայն մատակարարել ապրանքները:

*Վաճառողը պարտավոր է սահմանել երաշխիքային սպասարկման ողջամիտ ժամկետ և նշված ժամկետում անհատույց փոխարինել շահագործման ոչ պիտանի ապրանքները:

* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711

Գլխավոր տնօրեն՝
Մ.Սևոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«20» «__05__» 2019թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում.				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
Հանդերձանք և անկողնային պարագաներ, այդ թվում՝			**0**	**30000000**	**49955800**	**66251800**	**66251800**
Հանդերձանք, այդ թվում՝			**0**	**20000000**	**36455800**	**39251800**	**39251800**
1.	18211100/1	կիսավերարկու (դատապարտյալի)			0	2796000	2796000
2.	18221600/6	կոստյումներ (դատապարտյալի)			21078600	21078600	21078600
3.	18331200/1	վերնաշապիկներ (երկարաթև դատապարտյալի)			8613000	8613000	8613000
4.	18311190/1	խալաթ (կանացի, դատապարտյալի)			336000	336000	336000
5.	18311190/2	խալաթ (խոհարարի)			114000	114000	114000
6.	18231100/1	զգեստներ (կանացի, դատապարտյալի)			670400	670400	670400
7.	18341100/1	շապիկ (տղամարդու, դատապարտյալի)			2750000	2750000	2750000
8.	18311220/1	գիշերանոցներ (կանացի, դատապարտյալի)			316800	316800	316800
9.	18311110/1	վարտիք (տղամարդու, դատապարտյալի)			2385000	2385000	2385000
10.	18311110/2	վարտիք (կանացի, դատապարտյալի)			192000	192000	192000
Անկողնային պարագաներ, այդ թվում			**0**	**10000000**	**13500000**	**27000000**	**27000000**
11.	39141200/1	ներքնակներ			2900000	5800000	5800000
12.	39511190/1	բարձ, բամբակյա			800000	1600000	1600000

13.	39511130/1	սավաններ			5600000	11200000	11200000
14.	39511170/1	բարձերեսներ			1800000	3600000	3600000
15.	39514100/1	սրբիչներ, բամբակյա			2400000	4800000	4800000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: **

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

Ծառայության պետ՝
Ա.Մխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ
ք. Երևան, Վ.Սարգսյանի-3
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 163018140422
ՀՎՀՀ 02560711

Գլխավոր տնօրեն՝
Մ.Սևոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 20 » 05. 2019 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«20» «__05__» 2019թ. կնքված
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԱՊՁԲ-19/3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն